ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

24.12.2015
թիվ 266

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան.

Կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N91-Ն որոշմամբ:

Առդիր՝ ...90... թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.72/14035-15
24 12 2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» դեկտեմբերի 2015 թվականի N 91-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանարպետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն՝
   եկամտային մասով՝ 57 101.2 հազար (հիսունյոթ միլիոն հարյուր մեկ հազար երկու հարյուր) դրամ,
   Ծախսային մասով՝ 57 101.2 հազար (հիսունյոթ միլիոն հարյուր մեկ հազար երկու հարյուր) դրամ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի եկամուտները՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համաւնքի 2016 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դիֆիցիտը (պակասուրդ)՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դիֆիցիտը (պակասուրդ)՝ ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Հաստատել բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համաձայն հավելված N2-ի:
9. 2016 թվականի ըստ եռամսյակների չծախսված գումարները թույլատրել օգտագործել ըստ հաջորդականության:
10. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:
11. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
12. Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ:
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (7) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ | | | |
| ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ԱԲՐԱՀԱՄ ՓԱՐՓԱՐՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# Տ ե ղ ե կ ու թ յ ու ն ն ե ր

գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | ապառքը տարեսկզբի դրությամբ | ապառքը տարեվերջի դրությամբ | տվյալ տարվա հաշվարկային գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 10079.4 | 12120.2 | 3400.0 |
| 2 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար | 13914.2 | 17450.8 | 6800.0 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 5624.6 | 9116.9 | 7168.8 |
| 4 | Հողերի վարձակալության վարձավճարներ | 248.9 | 364.5 | 262.4 |
| 5 | Այլ գույքի վարձակալության վարձավճարներ | - | - | X |

Մուսալեռ համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

Առաջատար մասնագետ Դ. Խաչատրյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բյուջեի ձևավորման, քննարկման, կատարման, վերահսկման հետ կապված գործունեությունը այն հիմնական խնդիրներն են, որոնք որոշում են համայնքի ինքնակառավարման մարմինների ուղղությունն ու վիճակը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների արդյունավետ օգտագործումից:

2016 թվականի Մուսալեռի գյուղական համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու համայնքի բնակչության կենսապայմանների բարելավմանն ու բարեկեցիկ, հարմարավետ միջավայրի ձևավորմանը:

Բյուջեի կազմման ժամանակ համայնքն իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

1. Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը:
2. Նպաստել կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը:
3. Ապահովել համայքի բնակիչների սոցիալական պաշտպանվածությունը:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանու անդամներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերել համայնքի 2016 թվականի բյուջեի միջոցների գոյացման և նպատակային ծախսման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի

Հայաստանի Հանրապետության Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվենկատվածությունը, հավաստիությունն ու հստակությունը:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի համաձայն համայնքի 2016 թվականի բյուջեն բաժանված է 2 բաղկացուցիչ մասերից՝

Համայնքի բյուջեի վարչական մաս /վարչական բյուջե/ և

Համայնքի բյուջեի ֆոնդային մաս /ֆոնդային բյուջե/

Բյուջեի այդ բաղկացուցիչ մասերը հավասարակշռված են:

Բյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսման և դրանց կազմման աշխատանքներն իրականացվում են ինչպես վարչական բյուջեի, այնպես էլ ֆոնդային բյուջեի համար առանձին:

Նախատեսված է նաև պահուստային ֆոնդ, որը տարվա ընթացքում ի հայտ եկած չնախատեսված ծախսերի ֆինանսական աղբյուր է:

Մուսալեռի գյուղական համայնքի բյուջեն կանխատեսվում է.

Եկամուտների գծով – 57101.2 հազար դրամ,

Ծախսերի գծով _- 57101.2 հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն կազմելիս կատարվել են համեմատական վերլուծություններ՝ 2014 թվականի բյուջեի փաստացի արդյունքների, 2015 թվականի հաստատված և 2016 թվականի կանխատեսվող ցուցանիշների հետ: Այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

/հազար դրամ/

| | Եկամուտներ /հազար դրամ/ | Ծախսեր /հազար դրամ/ |
|---|---|---|
| 2014թ. փաստացի | 48099.9 | 44924.0 |
| 2015թ. հաստատված | 54583.4 | 53583.4 |
| 2016թ. կանխատեսվող | 57101.2 | 57101.2 |

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բյուջեում նախատեսված եկամուտները հիմնավորված են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքներով:

2016 թվականի բյուջեի եկամուտների կանխատեսման համար հիմք են հանդիսացել նախորդ տարիների մուտքերի կատարման վերլուծությունը:

Բյուջեի եկամուտների մասում նախատեսվել են հարկեր և տուրքեր՝ 17705.5 հազար դրամ:

Ոչ հարկային եկամուտների գծով նախատեսվել է 962.4 հազար դրամ:

Համահարթեցման սկզբունքով Մուսալեռի գյուղական համայնքին 2016 թվականի համար հատկացված է 38433.3 հազար դրամի չափով դոտացիա:

Ընդամենը նախատեսվում է 2016 թվականի ընթացքում եկամուտ՝ 57101.2 հազար դրամի չափով:

### <u>Նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առանձին եկամտատեսակների վերլուծությամբ</u>

Հարկեր և տուրքեր

Հարկային եկամուտները և տուրքերը 2016 թվականի համար նախագծով ծրագրվել են 17705.5 հազար դրամ:

ա) Հարկային եկամուտները ծրագրվել են 17400.0 հազար դրամ:

գույքահարկը 2016 թվականի համար կանխատեսվել է 10600.0 հազար դրամ:

հողի հարկը 2016 թվականի համար կանխատեսվել է 6800.0 հազար դրամ:

2016 թվականի բյուջեում հողի հարկի և գույքահարկի գծով մուտքերի կանխատեսման ժամանակ գնահատվել է այդ հարկերի գծով 2014 թվականի հաշվարկային գումարների ծավալները, գնահատվել է գույքահարկի և հողի հարկի գծով համայնքի բյուջեի եկամուտների պոտենցիալ մակարդակը: Կանխատեսումների համար հաշվի է առնվել նաև նախորդ տարիների այդ հարկերի գանձելիության մակարդակը:

բ) Տեղական տուրքերը ծրագրվել են 305.5 հազար դրամ, որից

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 37.5 հազար դրամ:
- Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը նախատեսվել է 5.0 հազար դրամ:
- 1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ կանխատեսվել է 56.0 հազար դրամ:

  2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ կանխատեսվել է 56.0 հազար դրամ:
- Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 150.0 հազար դրամ:
- Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը կանխատեսվել է 1.0 հազար դրամ:

2. Տեղական վճար ծրագրվել է 962.4 հազար դրամ, որից

- Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման և համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ծրագրվել է 15.0 հազար դրամ:

Աղբահանության վճար է նախատեսվել 685.0 հազար դրամ:

Տեղական տուրքերի և վճարների գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N 78-Ն որոշումը:

Նախատեսվել է համայնքի տարածքում գտնվող հողի վարձակալական վճարի գծով եկամուտներ 262.4 հազար դրամ: Հողի վարձակալական վճարի գծով եկամուտի կանխատեսման համար հաշվի է առնվել նաև նախորդ տարիների գանձելիության մակարդակը:

Աղյուսակ N1-ում ներկայացված է 2014 թվականի փաստացի, 2015 թվականի հաստատված և 2016 թվականի նախատեսված եկամուտները վարչական և ֆոնդային բյուջեներում՝

Աղյուսակ N1 /հազար դրամ/

| N | Եկամուտների անվանումը | 2014թ. փաստացի. | 2015թ. հաստ. | 2016թ. Նախատ |
|---|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 5473.1 | 6100.0 | 6800.0 |
| 2 | Գույքահարկ՝ այդ թվում | 9500.8 | 10400.0 | 10600.0 |
| | Գույքահարկ շենքերի շինությունների | 3292.9 | 3200.0 | 3400.0 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների | 6207.9 | 7200.0 | 7200.0 |
| 3 | Վարձակալությամբ տրված հողի հարկ | 178.7 | 300.0 | 262.4 |
| 4 | Տեղական տուրքեր և վճարներ | 930.0 | 2070.5 | 1005.5 |
| 5 | Դոտացիա (պետ. բյուջեից ստացված միջոցներ) | 32017.3 | 35712.9 | 38433.3 |
| Ընդամենը | | 48099.9 | 54583.4 | 57101.2 |

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ N2-ում ներկայացված է վարչական և ֆոնդային բյուջեների ծախսերը ըստ գործառական դասակարգման 2014 թվականի փաստացին, 2015 թվականի հաստատվածը և 2016 թվականի նախատեսվածը:

Աղյուսակ N2

/հազար դրամ/

| | | 2014թ. Փաստացի | 2015թ. հաստատված | 2016թ. նախատեսված |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարան | 24536.5 | 27595.4 | 28175.0 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն /Այլ դասերին չպատկանող/ | 2243.4 | 3558.0 | 3830.0 |
| 3 | Այլ սոցիալական ծրագրեր | 4255.0 | 4000.0 | 4000.0 |
| 4 | Այլ մշակութային կազմակերպություններ (Երիտասարդական, սպորտային ծրագրեր) | 89.5 | 300.0 | 200.0 |
| 5 | Աղբահանում | 2400.0 | 2400.0 | 2400.0 |
| 6 | Նախագծային ծախսեր | 0 | 0 | 0 |
| 7 | նախադպրոցական կրթություն | 11399.6 | 14730.0 | 15896.2 |
| 8 | Շենքերի շինությունների կառուցում | 1975.8 | | |
| 9 | Վարչական սարքավորում | 2184.8 | | |
| 10 | Շենքերի, շինությունների կապիտալ վերանորոգում | 3083.1 | | |
| 11 | Այլ ակտիվների ձեռքբերման ծախսեր | 990 | 0 | 0 |
| 12 | Պահուստային ֆոնդ | 0 | 2000.0 | 2600 |
| 13 | Տնտեսական հարաբերություններ /օտարում/ | -3011.8 | 0 | 0 |
| Ընդամենը | | 50145.9 | 54583.4 | 57101.2 |

Աղյուսակ N3-ում ներկայացված է վարչական և ֆոնդային բյուջեների ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ 2014 թվականի փաստացին, 2015 թվականի հաստատվածը և 2016 թվականի նախատեսվածը:

Աղյուսակ N3

/հազար դրամ/

| հ/հ | ԾԱԽՍԵՐ | 2014թ. (հազ. դրամ) Փաստ. | 2015թ. (հազ. դրամ) Հաստ. | 2016թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 18143.8 | 20715.4 | 20000.0 |
| 2 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ | 1600.0 | 1300.0 | 2300.0 |
| 3 | Գործուղում | 140.0 | 250.0 | 200.0 |
| 4 | Էներգետիկ ծառայություն | 3224.3 | 3500.0 | 4000.0 |
| 5 | Կապի ծառայություն | 387.5 | 450.0 | 380. |
| 6 | Ապահովում (կոմունալ ծառայություն) | 2600.0 | 2780.0 | 2780.0 |
| 7 | Այլ նպաստներ բյուջեից (սոց. օգնություն) | 4255.0 | 4000.0 | 4000.0 |
| 8 | Այլ մշակութային կազմակերպություններ (Երիտասարդական ծրագրեր) | 89.5 | 300.0 | 200.0 |
| 9 | Մասն. զարգացման, համակարգչային տեղեկատվական և ընդհանուր բնույթի ծախսեր | 10992.0 | 15510.0 | 16761.2 |
| 10 | Վարչական սարքավորումների ծախսեր | 2184.8 | 0 | 0 |
| 12 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր, տրանսպորտային նյութեր | 624.8 | 680.0 | 970.0 |
| 13 | Գրասենյակային և այլ նյութեր | 250.0 | 250.0 | 250.0 |
| 14 | Ներկայացուցչական ծախսեր | 387.0 | 700.0 | 700.0 |
| 15 | Շենքերի, կառույցների մեքենաների, սարքավորումների և ընթացիկ նորոգում և պահպանում | 1282.3 | 1170.0 | 1300.0 |
| 16 | Շենքերի և շինությունների կառուցում | 1975.8 | 0 | 0 |
| 17 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 3083.1 | 0 | 0 |
| 18 | Նյութեր,պարագաներ | 990.0 | 0 | 0 |
| 19 | Պահուստային ֆոնդ | 0 | 2000.0 | 2600.0 |
| 20 | Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից, օտարում | -3011.8 | 0 | 0 |
| 21 | Սուբսիդիաներ ոչ ֆինանս. պետ. (համայնք) կազմակերպ. | 695.4 | 0 | 0 |
| 22 | Այլ ծախսեր (ապահովագրական հատուկ նպաստ, գույքի վարձ. անդամավճար) | 252.4 | 978.0 | 660.0 |
| | Ընդամենը | 50145.9 | 54583.4 | 57101.2 |

Աղյուսակ N4-ում ներկայացված է
Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)

Աղյուսակ N4

| | 2014թ. (հազ. դրամ) Փաստ. | 2015թ. (հազ. դրամ) Հաստ. | 2016թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|
| Ընդամենը հավելուրդը կամ դեֆիցիտը | 2046.0 | -5546.1 | 0 |

Աղյուսակ N5 -ում ներկայացված է համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները

Աղյուսակ N5

| | 2014թ. (հազ. դրամ) Փաստ. | 2015թ. (հազ. դրամ) Հաստ. | 2016թ. (հազ. դրամ) Նախ. |
|---|---|---|---|
| Առանց վարչական մասի միջոցների ֆոնդային մաս մուտքագրված գումար | 2046.0 | 2370.2 | 0 |
| վարչական մասի միջոցների ֆոնդային մաս մուտքագրված գումար | 0 | 3175.9 | |
| Ընդամենը | 2046.0 | 5546.1 | |

Ստորև ներկայացված է 2014 և 2015 թվականների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Ներկայացված է նաև 2015 և 2016 թվականների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈԽՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույք. | |
|---|---|---|---|---|
| | | | 2015 | 2016 |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 270000 | 270000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 135000 | 135000 |
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 150000 | 150000 |
| | | | | |
| 1 | Առաջատար մասնագետ | 5 | 125000 | 125000 |
| 2 | I կարգի մասնագետ | 1 | 115000 | 115000 |
| | | | | |
| 1 | Գործավար | 1 | 80000 | 80000 |
| 1 | Հավաքարար | 1 | 80000 | 80000 |
| 2 | Բանվոր ծառայող | 2 | 80000 | 80000 |
| | Ընդամենը | | 1615000 | 1615000 |

2015-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույք. | |
|---|---|---|---|---|
| | | | 2015 | 2016 |
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 100000 | 116000 |
| 2 | Հաշվապահ | 0.5 | 71000 | 90000 |
| 3 | Դաստիարակ | 2 | 92600 | 105000 |
| 4 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 92600 | 105000 |
| 5 | Խոհարար | 1 | 66140 | 75000 |
| 6 | Խոհարարի օգնական | 0.5 | 71000 | 83000 |
| 7 | Օժանդակ բանվոր | 1 | 66140 | 73200 |
| 8 | Դաստիարակի օգնական | 2 | 75000 | 95000 |
| 9 | Տնտեսվար | 0.5 | 80000 | 0 |
| 10 | Դռնապահ | 1 | 71000 | 0 |
| 11 | Գործավար | 0.5 | 71000 | 85000 |
| 12 | Հաշվետար-գանձապահ | 0.5 | 71000 | 78000 |
| 13 | Պահակ | 2 | 73200 | 0 |
| 14 | Բանվոր-ծառայող | 2 | 0 | 78000 |
| 15 | Բուժքույր | 0.5 | 0 | 98000 |
| Ընդամենը | | | 1013180 | 1089700 |

**2016թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.**

### Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

1. Համայնքի փողոցների և ճանապարհների բարեկարգում և կանաչապատում,
2. խմելու ջրի ջրագծերի վերանորոգում և կառուցում,
3. գիշերային լուսավորության անցկացում,

### Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

1. Տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների կազմակերպում,
2. Աջակցություն երիտասարդության դերի բարձրացմանը:

### Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

1. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանն ուղղված միջոցառումների կիրառում,
2. Սպորտային հրապարակի պահպանմանն ուղղված աշխատանքների իրականացում.

### Սոցիալական ծառայության բնագավառում

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին, հարազատին կորցրած բնակիչների ընտանիքներին, համայնքում ծնված երեխաների ծնողներին, պարտադիր զինվորական ծառայությունն ավարտած երիտասարդներին, բուժման անհրաժեշտություն ունեցող բնակիչներին սոցիալական աջակցություն:

### Գյուղատնտեսության բնագավառում

1. Համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում,

2. Գյուղատնտեսության և անասնապահության զարգացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում:
3. Աջակցություն գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը. գյուղգործիքների ձեռք բերում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ